



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 10 » _____ 08 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-280

**Օգոստոսի 3-9-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Օգոստոսի 3-ի գիշերը շրջանների զգալի մասում, 3-ի ցերեկը առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ՝ մինչև 4-12 մմ քանակությամբ (Գորիս՝ 22մմ, Սիսիան՝ 29մմ): Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը օգոստոսի 3-6-ին նորմայից ցածր է եղել 1-4 աստիճանով, օգոստոսի 7-8-ին՝ նորմայի սահմաններում:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է օգոստոսի 8-9-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում դիտվել է +32...+34°C, Տավուշում՝ +28...+34°C, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +23...+28°C (Սեմյոնովկա՝ +19°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում գրանցվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +9...+14 °C (Աշոցքում, Տաշիր՝ +6°C), Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +14...+16°C (Դիլիջան՝ +9°C), Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ 16...+20°C:

Օգոստոսի 3-ին Սիսիանում դիտվել է կարկուտ Յմմ տրամագծով:

Օգոստոսի 4-ին Արարատյան դաշտում և Երևանում երեկոյան ժամերին դիտվել է քամու ուժգնացում մինչև 15-20մ/վրկ արագությամբ:

Շաբաթվա առաջին կեսին հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ,
իսկ երկրորդ կեսին՝ բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով և կազմել՝ 1900.74 մ
(09.08.20թ.), որն հավասար է անցյալ տարվա նույն օրվա մակարդակին:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան

Գազիկ Սուրենյան
Հեռ.՝ 012 31 79 29